«Հաստատում եմ» _____

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր Ե. Սերոբյան

«28» մարտի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տաթևիկ Սլավիկի Մովսիսյանի «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում» վերնագրով ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Տաթևիկ Սլավիկի Մովսիսյանի «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում» վերնագրով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերին ներկայացվող ժամանակակից պահանջներով, որոնք ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում առաջադրում են նոր խնդիրներ և մարտահրավերներ: Դրանք բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող ռազմավարական և օրենսդրական փոփոխություններն են, տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջների բազմազանեցումը, որակյալ կրթական ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, հասարակության, կրթության ոլորտի շահակիցների նորանոր պահանջները, բարձրագույն կրթության կառավարման ոլորտում առկա խնդիրները և այլն: Այսօր որոշակի խնդիրներ են արձանագրվում բուհերի հավատարմագրման, որակի ապահովման քաղաքականությունների և ռազմավարությունների իրականացման, բուհերում իրականացվող տարբեր վերափոխումների, ԵԲԿՏ (Եվրոպական բարձրագույն կրթական տարածք) գործիքակազմի կիրառման, ԵԲԿՏ-ին լիովին ինտեգրվելու գործընթացներում: Սրանք արձանագրված հիմնախնդիրներ են, որոնք այսօր հիմնավորում են բարձրագույն

կրթության ոլորտում որակի ապահովման ուղղությամբ խորը, համապարփակ ուսումնասիրությունների, հետազոտությունների անհրաժեշտությունը: Դրանք հնչեղություն ունեցող հարցեր են և թեմայի արդիականության հիմնավորման համար հիմք են հանդիսանում :

Ներածության մեջ ատենախոսը, ելնելով հետազոտության հիմնախնդրի արդիականությունից, որոշել է հետազոտության նպատակը, խնդիրները, որոնք ձևակերպված են հակիրճ, բացառիկ ճշգրիտ և տալիս են ամբողջական պատկերացում հետազոտության իրականացման գործընթացի մասին: Գիտական նորույթը որոշակիացված է, այն պարունակում է տեսական և գործնական նոր մոտեցումներ, հանձնարարականներ: Ներկայացված է աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Աշխատանքի առաջին գլուխը, որը կրում է «Բարձրագույն կրթության որակի ապահովման գիտատեսական հիմքերը» խորագիրը, բաղկացած է հինգ ենթագլխից: Առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակը, որտեղ քննարկվում են «Կրթության որակ», «Որակի ապահովում» հասկացությունների տարբեր սահմանումները, մոտեցումները, տրվում են դրանց համեմատությունները: Հաջորդ ենթագլխում ատենախոսն ուսումնասիրում է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների պատմական զարգացումը, փուլերը, նպատակները, գործընթացները, գագաթնաժողովները, չափորոշիչները, ուղենիշները և այլն: Այս գլխում հեղինակն ուսումնասիրում և ներկայացնում է բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը, որակի ապահովման գործընթացների նպատակները, որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացների փաստաթղթային հենքը, մեխանիզմները, մոդելները, գործիքակազմը: Գնահատելի է այն, որ ատենախոսն անդրադարձել և վերլուծության է ենթարկել բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելների գործարկման սկզբունքները ու առանձնահատկությունները: Առաջին գլխի հինգերորդ ենթագլխում ևս բավականին ուշագրավ վերլուծություններ կան. ներկայացվում է տարբեր երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Նիդերլանդների, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի որակի ապահովման փորձը, որն ամբողջացնում է պատկերացումներն այդ գործընթացի, դրա առանձնահատկությունների վերաբերյալ:

Երկրորդ «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման և զարգացման ռազմավարական մոտեցումները» վերտառությամբ գլխում, ատենախոսը քննարկում է բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման և զարգացման նախադրյալները, այդ ոլորտի պետական, ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական մոտեցումները: Այս համատեքստում ներկայացված են ՀՀ որակի արտաքին ապահովման համակարգի հիմնախնդիրներն ու զարգացման ուղղությունները: Աշխատանքի երկու գլուխներում կատարված մանրակրկիտ ուսումնասիրություններն ու վերլուծությունները տրամաբանորեն հանգեցնում են ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի արդի հիմնախնդիրների ու զարգացման հեռանկարների հարցի քննարկմանը:

«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները» խորագրով երրորդ գլխի առաջին ենթագլխում ատենախոսն ուսումնասիրում, բացահայտում և ներկայացնում է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում: Ներկայացված են օրենսդրական հակասություններ, որոնք սահմանափակում են որակի ապահովման առումով իրականացվող բազմաթիվ գործընթացներ, միջոցառումներ: Հաջորդ ենթագլխում քննարկվում են ՀՀ բուհերում որակի ապահովման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում: Այստեղ հիմնավորված ներկայացվում են ՈԱԵՉՈՒ-ի (որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները) 10-ը չափորոշիչները, որոնց պահանջներին հետևելու տեսանկյունից ուսումնասիրվել են ՀՀ 15 հավատարմագրված բուհերի ինքնավերլուծություններն ու փորձագիտական զեկույցները: Յուրաքանչյուր չափորոշիչ ուսումնասիրելիս ատենախոսը բավականաչափ համոզիչ ներկայացնում է որոշ հակասություններ, խոչընդոտներ, որոնք նվազեցնում են իրականացվող տարբեր գործընթացների արդյունավետությունը:

Հաջորդ ենթագլխում ատենախոսության հեղինակն ուսումնասիրում, վերլուծում և գնահատում է ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետությունը: Իրականացվել են հարցումներ, ներկայացված են հարցման արդյունքների վերլուծությունները, որոնց հիման վրա ակնհայտ է դառնում, որ, այնուամենայնիվ, կան խնդիրներ, որոնք ինքնավերլուծության գործընթացի արդյունավետությունը նվազեցնում են: Հետազոտողն

իրավացիորեն անդրադարձել է փորձաքննության փուլերի ընթացքում հանդիպող խնդիրների բացահայտմանը՝ այդ համատեքստում իրականացնելով տարբեր գործընթացների արդյունավետության գնահատում. փորձագիտական խմբերի, համակարգողների գործիմացության, փորձագիտական այցերի արդյունավետության, տևողության, հեռավար տարբերակով փորձագիտական այցերի, փորձագիտական զեկույցի ձևաչափի կառուցվածքի, փորձագիտական զեկույցի բովանդակության և այլ հարցերի: Ներկայացված են նաև հետհավատարմագրման փուլի հետ կապված որոշ դիտարկումներ (կարիքների վերհանման մեխանիզմներ, հետադարձ կապ, ֆինանսավորման աղբյուրներ և այլն):

Երրորդ գլխի վերջին ենթագլխում հեղինակը մշակել է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել, որի գործարկումը հիմնավորված է և դրա վերաբերյալ կան ուշագրավ առաջարկություններ՝ կապված նոր չափանիշների և չափորոշիչների ներդրման, հայեցակարգային որոշ դրույթների վերանայման հետ:

Եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին և հետազոտության բովանդակությանը: Դրանք ամբողջական եզրահանգումներն են, որոնք հիմնավորում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Օգտագործված գրականության ցանկը հարուստ է և լիովին ներկայացված է աշխատանքում:

Ատենախոսության վերաբերյալ կան որոշ նկատառումներ.

1. Ցանկալի է 1.5 ենթագլխում, որտեղ ներկայացված է բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման միջազգային փորձը, ներկայացվեին նաև Ռուսաստանի Դաշնությունում այդ ուղղությամբ իրականացվող գործընթացները:
2. Աշխատանքում տարբեր հարցեր քննարկելիս նշվում է կորոնավիրուսային համավարակի մասին: Ցանկալի էր այդ հարցերի քննարկումները դիտարկել նաև արտակարգ իրավիճակների տեսանկյունից:
3. Ցանկալի է աշխատանքի հավելվածում ներկայացվեր հապավումների ցանկը:
4. Ատենախոսության մեջ կան տեխնիկական վրիպակներ:

Սակայն նշված նկատառումները չեն ստվերում կատարված հետազոտական աշխատանքի գիտական արժեքն ու նշանակությունը: Ատենախոսությունն ավարտուն, գիտամանկավարժական արժեքավոր, ծավալուն հետազոտական ինքնուրույն

աշխատանք է, որի արդյունքները տեսական, գործնական-կիրառական նշանակություն ունեն ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման, ոլորտում իրականացվող բարեփոխումների, բարձրագույն կրթության համակարգի զարգացման համար:

Հետազոտական աշխատանքում առաջադրված դրույթները, գաղափարները, արժեքավոր վերլուծություններն ու բացահայտումները, նորամուծությունները հարստացնելու են մանկավարժական գիտության ոլորտը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տաթևիկ Սլավիկի Մովսիսյանի «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2023 թվականի մարտի 23-ի՝ մանկավարժության ամբիոնի թիվ 11 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ա. Յայլոյանը, Ն. Գրիգորյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Շ. Ալեքսանյանը, Մ. Ղալաչյանը, Ա. Զաղոյանը, բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուխյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար Կ. Պետրոսյան